ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4366-Ա «07» սեպտեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N 4232-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2026 թվականի սեպտեմբերի 4-ի N 4336-Ա որոշումը՝

1. Երևանի քաղաքապետի 2026 թվականի օգոստոսի 31-ի «Երևանի ավագանու 7-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին» N 4232-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված

Երևանի քաղաքապետի

07.09.2026 թ.

Հ. 4366-Ա որոշման

«Հավելված

Երևանի քաղաքապետի

31.08.2026թ.

Հ. 4232-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի N 744-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
2. Երևան քաղաքում Արմենուհի Տիգրանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
3. Երևան քաղաքի Շահումյան 4-րդ փողոցն անվանափոխելու մասին: (Զեկուցվող)
4. Երևան քաղաքում Հրաչուհի Ջինանյանի անվամբ պուրակ անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
5. Երևան քաղաքում Գուրգեն Դալիբալթայանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
6. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Զեկուցվող)
7. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շահումյան փողոցի հ.2 հասցեում շինարարական թափոնների վերամշակման ջարդիչ կայանի կառուցման և բետոնհանգույցի վերազինման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
8. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Հ.Թևոսյան փողոցի հ.1/13 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
9. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 4/1 հասցեում գոյություն ունեցող պատմամշակութային շենքերի հիմնանորոգման նախատեսվող

գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

10. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի փողոց հ.7 շենք, հ.3 բնակելի տուն և Արամի փողոց հ.7 առևտրագործարարական շենք հասցեներում՝ «Հին Երևան» թաղամասի «52»-«57» և «G»-«J» առանցքներով պարփակված հատվածամասում գտնվող շենքերի հարկերի ավելացման և վերակառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
11. Հանրապետության փողոցի հ.85 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
12. Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով «Հենակետշին» ՓԲ ընկերությանը պատկանող հողամասը Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/7 հասցեին կից գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)
13. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին: (Զեկուցվող)
14. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին: (Զեկուցվող)
15. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)
16. Վասիլ Լևսկու հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)
17. Գույքի նվիրատվության մասին: (Զեկուցվող)
18. Երևան քաղաքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)
19. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
20. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
21. Երևանի վարչական շրջանների սահմանները սահմանելու մասին: (Զեկուցվող)
22. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
23. Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի փողոց հ.121 շենքի հ.55՝ 54,26 քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարելու մասին: (Զեկուցվող)
24. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)
25. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին: (Զեկուցվող)
26. Երևան քաղաքում Ազատ Գասպարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)

27. «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին: (Զեկուցվող)
28. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Զեկուցվող)»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**